

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ



ՎԱՆԱՁՈՐ - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հավավումների ցանկ

Ներածություն

1.Արդյունաբերություն, ՓՄՁ, Տեղեկատվական Տեխնոլոգիաներ եւ մասնավոր հատված զարգացում

1.1 Արդյունաբերություն եւ մասնավոր հատվածի զարգացում

1.2 ՓՄՁ

1.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ

1.4 Զբոսաշրջություն

2.Գյուղատնտեսություն

3.Բնապահպանություն

4.Սոցիալական ոլորտ

4.1 Կրթություն

4.2 Առողջապահություն

4.3 Սոցիալական պաշտպանություն

5.Ենթակառուցվածքներ

5.1 Տրանսպորտ եւ ճանապարհաշինություն

5.2 Զրամատակարարում եւ ջրահեռացում

5.3 Էներգետիկա

5.4 Գազամատակարարում (գազիֆիկացում)

6.Քաղաքաշինություն

7. Տարածքային կառավարում

7.1 Տարածքային կառավարում

7.2 Տեղական ինքնակառավարում

8.Ֆինանսավորում

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրի տրամաբանական հենք

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ միջոցառումների

ՀԱՎԵԼՎԱԾ 3 - ՀՀ Լոռու մարզի 2019թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ աղբյուրերների

ՀԱՎԵԼՎԱԾ 4 -Մոնիթորինգի հիմնական ցուցանիշներ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏՀՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏՀՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏԿՀՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՀ	Տարածքային զարգացում
ՏՀՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՄՀՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՖՀ ՊԱԿԱ	Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ Ռեգիոն
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն
ԳԾ	Գործունեության ծրագիր

Ներածություն

Լոռու մարզի 2019 գործունեության ծրագրի համար կարևորվում է մշտադիտարկումը, որը իրականացվում է մարզային վարչակազմի կողմից՝ մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգի միջոցով: ՄԳ համակարգը վերահսկում է Ծրագրի կատարումը, ամփոփում է 2019 թվականի գործունեության արդյունքները՝ ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

Մոնիտորինգի հաշվետվությունը իր մեջ ամփոփում է 2019թ ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԳ համակարգից ստացված արդյունքները: Այն ներառում է հետևյալ գլխավոր բաժինները.

Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները (հավելվածներով), կատարված ծախսերը և արդյունքները:

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2019թ.-ին ՀՀ Լոռու մարզում Արդյունաբերություն, ՓՄՁ, մասնավոր հատված, ՏՏ եւ զբոսաշրջություն ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը շուրջ **12,4** մլրդ դրամ էր, տարբեր ֆինանսական աղբյուրների ներգրավմամբ իրականացվել են **6,8** մլրդ դրամի ներդրումներ:

	Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը/	2019թ. ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական բյուջեն	2019թ. իրականացված
	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	12,350,176.0	6,893,084.2
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	207,095.0	279,324.2
	սեփական միջոցներ	207,095.0	279,324.2
	վարկային միջոցներ	0.0	0.0
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	303,080.0	263,760.0
3	Համայնքային բյուջե	-	0.0
4	Մասնավոր ներդրողներ	11,840,000.00	6,350,000.0
5	Այլ աղբյուրներ	0.0	0.0

1.2 Արդյունաբերություն եւ մասնավոր հատվածի զարգացում

Համաձայն Լոռու մարզի զարգացման ռազմավարության հանքարդյունաբերությունը մարզի արդյունաբերության առաջատարն է, սակայն 2018թ.-ին «Վալլեքս խմբի ընկերությունների» գործունեության դադարեցման հետ կապված, ոլորտի արդյունաբերական արտադրանքի ծավալները կտրուկ նվազել են:

- ❖ «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից 2019թ.-ին իրականացվել են պոչերի մաքրման եւ զտման կայանի կառուցման եւ սարքավորումների ձեռք բերման աշխատանքներ: Ներդրումների ծավալը կազմել է 417.0 մլն.դրամ:
- ❖ «Սագամար» ՍՊԸ-ն 2019թ.-ին իրականացրել է 425.0 մլն դրամի աշխատանքներ:
- ❖ Իրանական «Ռադ սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ-ն 2019թ.-ին մեկնարկեց գազաբալոնների և կարբոնի գործարանի կառուցման աշխատանքները Վանաձոր քաղաքում: Ներդրումների ծավալը 2019թ.-ին կազմել է 3.0 մլրդ դրամ: Աշխատատեղեր դեռ չեն ստեղծվել:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

- ❖ Հայ-իրանական ներդրումների արդյունքում Վանաձորում «ՎԱԲԱ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրվեց հակակարկտայինների ցանցերի արտադրամաս, ներդրումների ծավալը կազմել է 2.35մլրդ դրամ, ստեղծված աշխատատեղերի թիվը 26:
- ❖ Թեթև արդյունաբերության բնագավառում մարզում գործել են 9 ձեռնարկություններ, որոնց արտադրանքը արտահանվում է: Դրանցից խոշորագույնը «Դարբբագս» ՍՊԸ-ն է, որի կողմից ներդրումների ծավալը կազմել է 280.00մլն դրամ:

1.2 Փոքր եւ միջին ձեռներեցություն

2019թ. տարվա ընթացքում տարբեր ընկերությունների կողմից Լոռու մարզում իրականացվել են ներդրումներ, սակայն գործող կամ նոր ստեղծված ձեռնարկությունների քանակի վերաբերյալ մարզպետարանում պաշտոնական տեղեկատվություն չի ստացվել:

Լոռու մարզում ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղը շարունակել է իր գործունեությունը մարզում, որը սակայն նախապես գնահատված չէր: Գրասենյակի գործունեության շրջանակներում կազմակերպվել են բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝

- ❖ ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվություն եւ խորհրդատվություն
- ❖ ՓՄՁ սուբյեկտներ ֆինանսական աջակցություն են ստացել «Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն» Ծրագրի շրջանակներում, որոնց տրամադրված վարկի գումարը կազմում է 24,2 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը կազմում է 24,7 մլն ՀՀ դրամ:
- ❖ ՓՄՁ-ի սուբյեկտներին միջազգային համագործակցության ընդլայնում:
- ❖ Ծրագրի ենթակառուցվածքային բաղադրիչի շրջանակներում 2019թ՝ ավարտվել են ՀՀ Լոռու մարզում «ճամփեզրյա կայանի» կառուցման և կահավորման աշխատանքները:
 - Ճամփեզրյա կայանը տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց է, որը կծառայի որպես՝
 - տեղական ապրանքների/ծառայությունների ուղղակի վաճառքի կետ՝ կներկայացվի առնվազն 30 տեղական ՓՄՁ-ների յուրահատուկ արտադրանքը՝ հատկապես սկսնակներինը, որոնք դեռևս ի վիճակի չեն ներկայանալ մեծ շուկաներում:
 - տեղեկատվական կենտրոն այցելուների և զբոսաշրջիկների համար՝ տեղեկատվություն կտարածվի մարզի զբոսաշրջային գրավչությունների և ծառայությունների վերաբերյալ:
 - հանգստի կետ անցորդների համար՝ անցորդները կկարողանան կանգ առնել, օգտվել հանրային ծառայություններից, կատարել գնումներ և հանգստանալ:
 - բուժ կետ – այցելուներին առաջին օգնություն ցուցաբերելու նպատակով:
 - շուկայավարման/մոնիտորինգի հարթակ և խորհրդատվական կենտրոն տեղական ՓՄՁ-ների համար՝ վաճառվող ապրանքների/ծառայությունների վերաբերյալ հաճախորդների կարծիքները կհավաքագրվեն և կփոխանցվեն արտադրողներին՝ վերջիններիս արտադրանքի/ծառայությունների որակի բարելավման նպատակով:
 - ժամանակավոր ապաստարան արտակարգ իրավիճակների դեպքում. կգործի առաջին բուժօգնության կետ:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիտորինգ

- ❖ Կայանի կողմից կարող են կազմակերպվել նաև տեղական ապրանքների ցուցահանդեսներ, տոնավաճառներ, փառատոններ, վարպետաց դասեր և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:
- ❖ 2019թ" ընթացքում կատարված ծախսերը կազմում են շուրջ **220,0 մլն ՀՀ դրամ**: Դեռևս ընթացքի մեջ են Կայանի գործառույթների իրականացման համար գործընկեր կազմակերպության ընտրության մրցույթը: Գործարկումը նախատեսվում է 2020թ. առաջին եռամսյակում:

Հայաստանի Վորլդ Վիժըն միջազգային կազմակերպության միջոցով տարեսկզբին իրականացվել են՝

- Տնտեսական զարգացման ծրագրեր 2.2 մլն դրամի
- Առողջապահական ծրագրեր 9.4 մլն դրամ
- Համայնքահեն ՀԿ-ի դրամաշնորհ, հովանավորվող երեխաների գրանցում 10.8 մլն դրամ
- Երեխաների պաշտպանության միջոցառումներ 5.3 մլն դրամ
- Երիտասարդական միջոցառումներ 4.4 մլն դրամ
- Հումանիտար աջակցության տրամադրում, Ալավերդի Ստեփանավան համայնքներում 17.6 մլն

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով պետական աջակցությամբ 2019թ.-ին մարզում իրականացվել են սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության ծրագրեր շուրջ 195,1 մլն դրամ արժողությամբ:

1.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի

2019թ.-ին ոլորտի կարիքները գնահատված չեն եղել, սակայն իրականացվել են 145.0 մլն դրամի ներդրումներ:

2019թ.-ի ծրագրով «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) գործունեության կառավարում» միջոցառման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսված միջոցները կազմել են շուրջ 60 մլն ՀՀ դրամ:

«Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) գործունեության կառավարում» միջոցառման շրջանակում.

ՎՏԿ-ում շարունակվել են հատուկ մասնագիտացված դասընթացները, որոնք կազմակերպվել են Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի համագործակցությամբ: Ընդհանուր առմամբ կազմակերպվել է շուրջ 24 դասընթաց («Մեխատրոնիկա» դուալ կարճաժամկետ դասընթաց, Yandex ընկերության Ծրագրավորման դպրոցի դասընթացները, համակարգչային նախագծման և արտադրության դասընթացները, Yandex ընկերության Ծրագրավորման դպրոցի դասընթացները, «Osensus Armenia» 3D

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

մողելավորման երկամսյա դասընթացները, «Ոչ հստակ տրամաբանությամբ արհեստական բանականության համակարգեր» դասընթաց և այլն), որը ունեցել է շուրջ 532 մասնակից:

Փետրվարի 23-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում անցկացվեց «Իմ քայլը հանուն Լոռու մարզի» ներդրումային բիզնես-համաժողովը՝ 2019թ-ի առաջին ներդրումային բիզնես-համաժողովը Հայաստանում: Այն ուղղված է ներդրումային միջավայրի ակտիվացմանը, բիզնես ոլորտում նորանոր փոխշահավետ գործակցային կապերի հաստատմանը:

Մարտի 13-ին ՎՏԿ-ում տեղի է ունեցել Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի «Մեխատրոնիկա» դուալ կարճաժամկետ դասընթացի իրականացման արդյունքների ներկայացման միջոցառումը: Դասընթացներն իրականացվել են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործուն մասնակցությամբ: Ծրագիրն իրականացվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Մայիսի 30-ին կայացել է ՎՏԿ «Ամառային դպրոցի» պաշտոնական բացումը: 2019թ-ի հունիսի 3-ից օգոստոսի 10-ը ներառյալ կազմակերպվել է ամառային դպրոց՝ 10-18 տարեկան դպրոցականների համար: 170-ից ավել երեխա մասնակցում են 10 շաբաթ տևողությամբ հազեցած և շատ հետաքրքիր ծրագրերին: Ամառային դպրոցի նպատակն է ուսուցանել ծրագրավորման լեզուներով հետաքրքրված դպրոցականներին, զարգացնել նրանց մոտ տրամաբանական և ակտիվության մտածողությունը, ամառային արձակուրդները կազմակերպել հետաքրքիր և արդյունավետ: Մասնակիցների համար կազմակերպվում են նաև սպորտային խաղեր (վոլեյբոլ, բասկետբոլ, թենիս, ֆուտբոլ):

«Չոր մարքեթինգ» խումբը Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպեց իր հերթական կոնֆերանսը, որտեղ ներկա էին տարբեր գործարարներ որոնք կիսվեցին իրենց գիտելիքներով և փորձով: Կոնֆերանսը նախատեսված էր ինչպես ներկա, այնպես էլ ապագա գործարարների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են բիզնեսով:

Անձնակազմը համալրելու և ընկերությունները զարգացնելու նպատակով ՎՏԿ-ում գործող «ՎանԱյԹի» և «Արխիդաշ» ընկերությունների հետ կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ, որոնց հաջողությամբ ավարտող մասնակիցները կարող են աշխատանքի անցնել նշված ընկերություններում: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում նոր աշխատակիցներով են համալրվել «Թիմզ» ԱՊԸ, «ՎանԱյԹի», «Արխիդաշ», «Արդեսք», «Օսենսուս Արմենիա» և «Ապոլլո էքսպրես» ընկերությունները:

ՎՏԿ ներգրավված ընկերությունների և կազմակերպությունների ընդհանուր թիվը 14-ն է: Այս տարի ՎՏԿ է ներգրավվել ևս երկու ընկերություն՝ «Ապոլլո էքսպրես»-ը, որը իրականացնում է ԱՄՆ հաճախորդների վաճառքների և բեռնափոխադրումների խորհրդատվություն և Գերմանական «Օսենսուս» ընկերությունը, որը նոր տեխնոլոգիաների հիման վրա եռաչափ սքաներների արտադրող է:

ՎՏԿ-ում տեղակայված ընկերություններում աշխատողների թիվը հասել է 162-ի: Ընկերությունների ներգրավման գործընթացը շարունակվում է՝ առաջարկելով նոր

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

ընկերություններին աջակցություն մասնագետների վերապրաստման, հավաքագրման, բիզնես խորհրդատվության և այլ հարցերում: Հանդիպումներ են կազմակերպվել նաև տարբեր տեղական ու միջազգային ընկերությունների հետ:

ՀՀ կառավարության, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և Ինժեներական ասոցիացիայի նախաձեռնությամբ Երևանում և Վանաձորում հունիսի 24-ից 28-ը անցկացվեց «Հայաստան-Ինժեներական շաբաթ» խորագրով միջոցառումների շարքը: «Հայաստան-Ինժեներական շաբաթ»-ի փակումը տեղի ունեցավ հունիսի 28-ին՝ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում, որտեղ կայացավ շաբաթվա արդյունքների քննարկումը՝ պետական ու մասնավոր կառույցների ներկայացուցիչների և փորձագետների ներգրավմամբ և ինժեներական լուծումների ցուցահանդես: Միջոցառմանը որպես բանախոսներ էին հրավիրված միջազգային և տեղական ինժեներական ընկերությունների ղեկավարներ և առաջատար մասնագետներ: Քննարկումները կայացան 3 նիստերի ընթացքում, որոնց ներկա էր մոտ 500 մասնակից: Ցուցահանդեսին ներկայացել էր 28 տեղական և միջազգային ընկերություն՝ այդ թվում ԱՄՆ-ից, Նիդերլանդներից և Գերմանիայից: Միջոցառումը եզրափակվեց ողջ-համերգով:

Հուլիսի 3-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ սեմինար՝ «Արհեստական բանականությունը և ապագայի իրավունքը» թեմայով: Սեմինարը վարեց իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Տարոն Սիմոնյանը:

Օգոստոսի 24-ին և սեպտեմբերի 27-ից 28-ը Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ընկերությունը «Մենեջմենթ Միքս» ընկերության հետ համատեղ, «Երիտասարդների զարգացման» ծրագրի շրջանակում իրականացրեցին «Կյանքի հմտություններ» դասընթացը, որին մասնակցեցին մոտ 250 ակտիվ երիտասարդներ Լոռու մարզից:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ «Զիվնինգ» կրթաթոշակային ծրագրի ինֆորմացիոն հանդիպումը, որտեղ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության և «Զիվնինգի» քարտուղարության ներկայացուցիչները ներկայացրեցին կրթաթոշակային ծրագիրը:

Միաժամանակ տեղեկացնում են, որ ՎՏԿ-ում իրականացվել է շուրջ 20 միջոցառում: 29 սկսնակ թիմերի և ընկերությունների ստացել են խորհրդատվական աջակցություն:

«Հայաստան - Ինժեներական շաբաթ»

ՀՀ կառավարության, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և Ինժեներական ասոցիացիայի նախաձեռնությամբ Երևանում և Վանաձորում 2019թ. հունիսի 24-28-ը անցկացվել է «Հայաստան - Ինժեներական շաբաթ» խորագրով միջոցառումների շարքը:

Այն հնարավորություն է տվել աշխարհին ներկայացնել հայկական տեխնոլոգիական ներուժն ու արտադրանքը՝ համախմբելով շուրջ 500 մասնակցի աշխարհի տարբեր երկրների

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

պետական, գիտահետազոտական, կրթական կազմակերպություններից, նորաստեղծ և կայացած ինժեներական ընկերություններից: Տեղական և միջազգային 30 կազմակերպություններ ցուցադրել են իրենց արտադրանքը, լուծումներն ու ծառայությունները, կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ՝ նվիրված ինքնակառավարվող տրանսպորտային միջոցներին, կիսահաղորդիչների նախագծմանն ու թեստավորմանը, 5G-ին, արդյունաբերական իրերի ինտերնետին, արհեստական բանականությանը և այլն:

1.4 Ջրոսաշրջություն

Համաձայն Լոռու մարզպետարանի տեղեկատվության 2019թ.-ին մարզում հյուրանոցային տնտեսությունների թիվը հասել է 90-ի:

ՌԴ-ի կողմից ֆինանսավորվող ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում 2019թ.-ին «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Լոռու Դեբեդ, Գուգարք, Սանահին գյուղական համայնքներին՝ զբոսաշրջության ենթակառուցվածքներ ստեղծելու համար: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 21.5 մլն դրամ, որը 2019թ. տարեկան գործունեության պլանում ներառված չի եղել:

ԵՄ համաֆինանսավորմամբ իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի ենթակառուցվածքային բաղադրիչի շրջանակներում ընթացքի մեջ է ՀՀ Լոռու մարզում «ճամփեզրյա կայանի» կառուցման և գործարկման աշխատանքները, որի շինարարական աշխատանքները կավարտվեն ս.թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Ներդրումների ծավալը 200.0 մլն դրամ է կազմել:

«Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնը իրականացրել է «ԷկոՏուն Լոռի»՝ պլաստմասե թափոնների վերամշակում, «Pottery House Armenia»՝ կավաբուժության կենտրոն, «Debet Workation Hotel»՝ հանգստի և աշխատանքի համար նախատեսված հյուրատուն, ծրագրերը:

Հարթագյուղ համայնքում՝ «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ, շարունակվում են իրականացվել ծրագրեր, մասնավորապես՝ հիմնանորոգվել է 2 հյուրատուն 13 մլն դրամ ներդրմամբ, գյուղատնտեսական ոչ ավանդական մշակաբույսերի մշակման աշխատանքներ 12 մլն դրամ, 5 բնակարանների վերանորոգման աշխատանքներ 9 մլն դրամ ներդրմամբ:

Լոռու մարզպետարանի կողմից ստեղծվել է <<Տուրիստական Լոռի >> ֆեյսբուքյան էջը՝ ոլորտի ծառայություն մատուցող կազմակերպությունների ներգրավմամբ, որի նպատակն է համախմբել զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչներին մեկ հարթակում, որտեղ կներկայացվեն ոլորտի նորությունները, պետության և մասնավորի կողմից իրականացվող ծրագրերը, առաջարկներ, և հաջողված պատմություններ:

Ստեղծվել է աշխատանքային խումբ զբոսաշրջության և ներդրումային ծրագրերի փորձագետների ներգրավմամբ առկա ծրագրերի վերամշակման և ներդրումներ ներգրավելու համար:

2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պետական օժանդակության ծրագրերի շրջանակներում իրականացվել են՝

✓ «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում Տաշիր համայնքում և Լոռի Բերդի Բովաձոր բնակավայրում հիմնվել են թվով 2 անասնաշենք: Ներդրման գումարը կազմել է՝ պետական ներդրում՝ 35մլն. դրամ, մասնավոր ներդրում՝ 67 մլն. 500 հազար դրամ, դոնոր կազմակերպությունների կողմից ներդրում՝ 12 մլն, դրամ

✓ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի գումարը կազմել է **3 միլիարդ 40 մլն. 350 հազար դրամ**

✓ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ **28 մարդ**, տրամադրված վարկերի գումարը կազմել է **171 մլն.400 հազար դրամ**

✓ «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ **3 մարդ**, տրամադրված վարկերի գումարը կազմել է **21մլն.834 հազար դրամ**

✓ Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ **6 մարդ**, տրամադրված վարկերի գումարը **կազմել է 129 մլն 949 հազար դրամ**

✓ «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր՝ շահառուների թիվը՝ **1 մարդ**, տրամադրված փոխհատուցման գումարը **կազմել է 252 հազար դրամ**

• «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում 2019 թվականի աշնանը մարզին անհատույց հատկացվել է 498 լիտր «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան միջոց, որով հողօգտագործողների միջոցով պայքար է իրականացվել 6225 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում: Ներ է դրվել 2 մլն 873 հազ դրամ:

• «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ իրականացվել է 35339 հատ ախտորոշիչ, իսկ տուբերկուլյոզի նկատմամբ 1553, սիբիրախտի՝ 70643, խշխշան պալար՝ 5646, դաբադի՝ 69118, պաստերելյոզի՝ 45789, վարակիչ մաշկաբորբի՝ 23322 հատ կանխարգելիչ միջոցառում: Մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ կատարվել է 1269 հատ ախտորոշիչ միջոցառում: Խոզերի ժանտախտ հիվանդության նկատմամբ կատարվել է 27032, ձիերի սիբիրախտի՝ 362, թռչունների ժանտախտի՝ 78725 հատ կանխարգելիչ միջոցառում, ընդհանուր թվով ՀՀ Լոռու մարզում իրականացվել է 358798 հատ միջոցառում: Ներ է դրվել 32մլն 100 դրամ

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

- Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառման շրջանակում նախատեսված էր հետազոտել մարզի 8 համայնք, սակայն 2019 թվականի հետազոտվել է արդեն 11 համայնքի գյուղատնտեսական նշանակության 5573 հա հող: Հետազոտվող տարածքից վերցված 1955 հողանմուշում կատարվել է 4708 փորձաքննություն, կազմվել են ագրոքիմիական քարտեզներ: Ներ է դրվել 3 մլն 724 հազ 800 դրամ
- Մարզպետարանի աջակցությամբ ՀՀ կառավարության հրատապ ծրագրով Լուսադբյուր համայնքում կառուցվել է 350մ երկարությամբ ոռոգման ցանց, ներ է դրվել 7 մլն 500 հազ. ՀՀ դրամ: Համայնքում ոռոգելի հողատարածքները ավելացել է 30 հա-ով:

➤ Լոռի բերդ համայնքում ձեռք է բերվել թվով 2 տրակտորներ՝ բելառուս MT3-1221.2 մակնիշի և թվով 4 գյուղգործիքներ՝ ընդհամենը 82 մլն դրամ արժեքով, որից 50 տոկոսը պետական միջոցներով

• **«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում իրականացվում են.**

✓ Աջակցություն մարզում գործող <<Դուստր Մելանյա>>, <<Գագիկ Մամուկյան>>, <<Տարոն Մաթոսյան>> ՍՊԸ կաթի վերամշակման արտադրամասերին՝ արտադրությունները ժամանակակից սարքավորումներով վերազինելու գործում: Կատարվել է **66.5 մլն. դրամի ներդրում**

✓ Հիմնվել են 19 անասնաբուժական կետեր՝ Տաշիր ստեփանավան, Սարչապետ, Մեծավան, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Մարգահովիտ, Ջրաշեն համայնքներում: Կատարվել է **11.8 մլն. դրամի ներդրում**

✓ Ծրագրի շրջանակներում թվով 36 ֆերմերներ սուբսիդավորման եղանակով ձեռք են բերել 148 գլուխ բարձր մթերատու խոշոր եղջերավոր կենդանիներ: Կատարվել է **40.0 մլն. դրամի ներդրում**

✓ Ծրագրի շահառու 7 համայնքների (Մարգահովիտ.Գյուլագարակ, Լոռի Բերդ, Ստեփանավան, Տաշիր, Սարչապետ, Մեծավան) 35 բնակավայրերում ընթացքի մեջ է 91 միավոր արոտոյին ենթակառուցվածքի շինարարության գործընթացը: Կատարվել է **92.95 մլն. դրամի ներդրում** ;

Ընդհամենը կատարվել է **211 մլն 250** հազար դրամի ներդրում

• Միջազգային դոնոր և մասնավոր կազմակերպությունների կողմից համաֆինանսավորմամբ Մարգահովիտ և Տաշիր համայնքներում հիմնվել են խոշոր եղջերավոր կենդանիների <<առաջատար>> անասնաշենքեր: Ներդրման գումարը կազմել է՝ մասնավոր ներդրում՝ 80 մլն. 500 հազար դրամ, դոնոր կազմակերպությունների կողմից ներդրում՝ 31 մլն, 500 հազար դրամ

• Ստեփանավան համայնքում մասնավոր ներդրմամբ կառուցվել է <<խելացի>> անասնաշենք: Ներդրման գումարը կազմել է 7 մլն դրամ

• Շարունակվում է Տաշիրի տարածաշրջանում գործող <<Բոզոյան>> ՍՊԸ-ի կողմից կառուցվող խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները, ներ է դրվել **50 մլն. դրամ**

• Կառուցվում է Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայում ինկուբատորային արտադրամաս, ներ է դրվել **300 մլն. դրամ**

• Գուգարք համայնքում հիմնվել է 40 տոննա տարողությամբ սառնարանային տնտեսություն: Ներդրման գումարը կազմել է 35 միլ. դրամ, որից 13 մլն դրամը ներ է դրվել 2019թ-ն:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագրի մոնիթորինգ

- Կարմիր Աղեկի բնակավայրում գործող <<Վահե Հովհաննիսյան>> Ա/Ձ-ի կողմից հիմնադրված թոշնաբուժական տնտեսությունում կատարվել է 7.2 մլն. դրամի ներդրում, որի արդյունքում ձեռք է բերել նոր սարքավորումներ և ածան հավեր:
- <<Համակնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> երկրորդ շրագրի շրջանակներում Վանաձոր և Բազում համայնքներում գործող կաթի վերամշակման «Գագիկ Մանուկյան Կոլյայի» Ա/Ձ և պտուղ-բանջարեղեն վերամշակման <<Վան ֆուդ>> ՍՊԸ արտադրության սարքավորումների վերազինման վրա կատարել են 83.78 մլն դրամ ներդրում, որից 39.9 մլն. դրամ պետ բյուջե, 43.88 մլն. մասնավոր ներդրումներ:
- <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> երկրորդ ծրագրի շրջանակներում Տաշիր համայնքում «Պանրի արտադրության և իրացման ծավալների ավելացում, թարմ կաթնամթերքի արտադրության կազմակերպում» արտադրության սարքավորումների վերազինում «Վիգեն Գրիգորյան Վազգենի» Ա/Ձ : Ներ է դրվել 19 մլն. 719 հազար դրամ պետ բյուջե և 28 մլն 857 հազար դրամ մասնավոր ներդրում:
- ՄԱԿ-ի Զարգացման (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի միջոցներով Գոգարան համայնքում կառուցվել է ջրահավաք ավազան և 4600 մետր ինքնահոս ոռոգման համակարգ: Ներդրման գումարը կազմել 33 մլն. դրամ
- ՄԱԿ-ի Զարգացման (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի միջոցներով Կաթնաջուր համայնքում կառուցվել է 4200 մ, Լեռնանցք համայնքում 2600 մ ոռոգման համակարգ: Ներդրման գումարը կազմել է 37 մլն. դրամ:
- ՄԱԿ-ի Զարգացման (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի միջոցներով Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերում իրականացվել է ոռոգման համակարգի ներդրում և արևային ֆոտովոլտային կայանի կառուցում: Ներդրման գումարը կազմել է 14.4 մլն. դրամ:
- «Լոռի» ԶՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգում, գարնան նախապատրաստական աշխատանքներ: Կատարվել է 20 մլն 397 հազար դրամի ներդրում
- ՄԱԿ-ի Զարգացման (UNDP), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի <<Հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը հյուսիս-արևելյան Հայաստանի լեռնային լանդշաֆտներում>> ծրագրի մարզահովիտ և Գուգարք համայնքներում: ներ է դրվել 35 մլն. դրամ:
- Մարզի համայնքներում սուբվենցիոն ծրագրերով ձեռք է բերվել մեքենասարքավորումներ եւ գյուղտեխնիկա; Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջե՝ 97 մլն. 842 հազար դրամ, համայնքային բյուջե՝ 85 մլն. 817 հազար դրամ, այլ՝ 11 մլն. 600 հազար դրամ
- Մեծավան, Լոռի Բերդ, Կաթնաջուր, Լեռնապատ համայնքներում ձեռք է բերվել գյուղ. տեխնիկա: Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջե՝ 45 մլն. 292 հազար դրամ, համայնքային բյուջե՝ 32 մլն. 267 հազար դրամ, այլ՝ 11 մլն. 600 հազար դրամ
- Գյուլագարակ եւ Լոռի Բերդ համայնքներում ձեռք է բերվել հակակարկատային կայանքներ: Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջե՝ 11 մլն. 550 հազար դրամ, համայնքային բյուջե՝ 11 մլն. 550 հազար դրամ

- Վանաձոր համայնքի կողմից ձեռք է բերվել մեքենասարքավորումներ: Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջե՝ 41 մլն. դրամ, համայնքային բյուջե՝ 41 մլն. դրամ
- Սուբվենցիոն այլ ծրագրերով ոռոգման ծրագրեր է իրականացվել Ախթալա, Օձուն, Հարթագյուղ, Սարահարթ համայնքներում : Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջե՝ 61 մլն. 717 հազր դրամ, համայնքային բյուջե՝ 27 մլն. 280 հազար դրամ, այլ՝ 7 մլն. 500 հազար դրամ:
- Մարզի Ստեփանավան, Լոռի բերդ, համայնքներում ծրագրերով ձեռք է բերվել մեքենասարքավորումներ եւ գյուղտեխնիկա; Ներդրման գումարը կազմել է՝ պետ. բյուջեի վարկային միջոցներ՝ 87 մլն. 998 հազար դրամ:

4.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ❖ 2019թ. ընթացքում Ալավերդի խոշորացված համայնքում նախատեսվել է իրականացնել 100 մլն. 467.39 հազ. դրամի աշխատանքներ: Մրցույթների արդյունքում գումարը կազմել է 96մլն. 217.84 հազ. դրամ: Տնտեսումը կազմել է 4 մլն. 218.95 հազ. դրամ: 2019թ. ընթացքում իրականացվել է 76 մլն. 266.4 հազ. դրամի աշխատանքներ: Մնացած 20 մլն. 161.3 հազ. դրամի աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2020թ. ընթացքում:
- ❖ 2019թ. ընթացքում Օձուն խոշորացված համայնքում նախատեսվել է իրականացնել 28 մլն. 470.4 հազ. դրամի աշխատանքներ: Մրցույթների արդյունքում գումարը կազմել է 27 մլն. 615.6 հազ. դրամ: 2019թ. ընթացքում իրականացվել է 27 մլն. 615.6 հազ. դրամի աշխատանքներ:
- ❖ Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում 2015-18թթ. ընթացքում Շնող համայնքում իրականացվել են 31 հա պտղատու այգիների հիմնման աշխատանքներ: 2019թ. նախատեսվել է 36 մլն. դրամ արժեքով ևս 15 հա պտղատու այգիների հիմնում, ոռոգում, մշակում և լրացում: Հիմնվել է 14 հա պտղատու այգիներ և տրամադրվել սեփականատերերին: Փաստացի իրականացված աշխատանքի արժեքը կազմում է 33 մլն. դրամ:
- ❖ Պետական բյուջեի ֆինանսավորմամբ անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ են իրականացվել 231 հա անտառներում և անտառային հողերում:
- ❖ 2019թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում իրականացրել է.
- ❖ անտառտնկման աշխատանքներ 72 հա մակերեսով համայնքային տարածքներում: Ընդհանուր առմամբ մարզում անտառվերականգնման ծրագրի կողմից տնկվել է շուրջ 220 000 տնկի:
- ❖ նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամքի և լրացման աշխատանքներ:
- ❖ համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում մարզի համայնքներին ու տարբեր կազմակերպություններին ծառատունկի համար տրամադրել է տնկիներ:
- ❖ Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի հետ համագործակցության արդյունքում «Մայ ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն Լոռու

մարզի Գուգարք և Դեբեդ համայնքներում հիմնել է անտառային կուլտուրաների տնկարաններ (համապատասխանաբար 3 հա և 1.5 հա)

❖ Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

❖ Ծրագրի շրջանակներում 2019թ. ընթացքում Լոռու մարզում իրականացվել է.

❖ ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի հետ համատեղ ծրագիրը դրամաշնորհ է տվել «Լոռու ուսանողների միավորում» ՀԿ-ին Լոռու մարզի Ձորագյուղ համայնքում էներգաբաղյունավետ տեխնոլոգիաների ներդրման ծրագիր իրականացնելու նպատակով, մասանավորապես գյուղի նախակրթարանում տեղադրվել է 5 կՎտ արևային կայան և 300 լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչ: Գյուղի դպրոցում տեղադրվել է 10 կՎտ արևային կայան և 200 լ տարողությամբ արևային ջրատաքացուցիչ: Նույն ծրագրի շրջանակներում Վահագնի համայնքի բնակիչներին կտրամադրվի 95-100 հատ փայտի էներգաբաղյունավետ վառարաններ:

❖ Լոռու մարզի Մարգահովիտ և Գուգարք համայնքներում իրականացվել է դեգրադացված արոտավայրերի հասանելիության բարձրացման ծրագիր, որի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները և ներդրումները

Մարգահովիտ համայնքում.

մշակվել են համայնքի 35 հա անմշակ վարելահողերը՝ դաշտավարական կերարտադրության համար

համաֆինանսավորմամբ համայնքին տրվել է տրակտոր, 3 կորպուսանոց գութան, խոտհնձիչ, մամիչ հակահավաք, ինչպես նաև դիզելային վառելիք

վերականգնվել է 10 հա դեգրադացված արոտ Շորի թալա հանդամասում

համայնքին տրվել է սերմախառնուրդ, պարարտանյութ և դիզելային վառելիք

Գուգարք համայնքում.

մշակվել է 15 հա անմշակ վարելահողեր՝ դաշտավարական կերարտադրության համար

համաֆինանսավորմամբ համայնքին տրվել է տրակտոր, 3 կորպուսանոց գութան, խոտհնձիչ, ինչպես նաև դիզելային վառելիք

վերականգնվել է 10 հա դեգրադացված արոտ Սարի գլուխ հանդամասում

համայնքին տրվել է սերմախառնուրդ, պարարտանյութ և դիզելային վառելիք:

❖ 2019-2020թթ. ընթացքում ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության աջակցությամբ, ընթացքի մեջ է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի, Տաշիրի, Ջիլիգայի անտառտնտեսությունների (28817 հա ընդհանուր մակերես) կառավարման պլանների պատրաստումը, որը կներառի նաև Գյուլագարակի «Սոճուտ» դենդրոպարկը (2576 հա): Աշխատանքների ընթացքում անտառտնտեսությունների և հարակից համայնքների միջև սահմանները ճշգրտվելու են արդեն ձեռք բերված բարձր լուծաչափի արբանյակային պատկերների հիման վրա: Իրականացվելու է մոնիթորինգ՝ դաշտում սահմանազատման գործողությունների ուղղությամբ: Անտառկառավարման պլանների նախագծերում ներառվել

են կենսաբազմազանության, ածխածնի և էկոհամակարգային ծառայությունների հավելվածները:

❖ Ստեփանավանի «Լոռե փրկարարական ջոկատ» ՀԿ-ի համար ձեռք է բերվել բազմասպեկտրալ լուսանկարահանող սարք, որը մոնիթինգ է նախորդ տարի ձեռք բերված դրոշին և թույլ է տալիս իրականացնել Ստեփանավանի և հարակից տարածքների անտառների մոնիթորինգի աշխատանքներ՝ անտառային հրդեհների, ապօրինի անտառօգտագործման կանխարգելման նպատակով:

❖ ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի հետ համատեղ ծրագրի Հայաստանի Մանուկներ Հիմնադրամին (COAF) տրված դրամաշնորհի շրջանակներում COAF-ի «Սմարթ» կենտրոնի տարածքում հիմնվել է փորձարարական տնկարան, իսկ Դեբետ և հարևան համայնքների շուրջ 80 տնտեսությունների տնամերձերում ներդրվել է հատապտուղների (ազնվամորու) մշակումը՝ որպես տեղի բնակիչների համար եկամտի այլընտրանքային աղբյուր և շրջակա անտառների վրա ազդեցության թուլացման միջոց:

❖ Մեծ Պարնի համայնքի բրիկետավորման համալիրի համար ձեռք է բերվել ունիվերսալ աղաց՝ ծղոտի և խոտի աղալու և բրիկետավորման հումք ստանալու նպատակով (արժեքը կազմում է 17 447 ԱՄՆ դոլար):

❖ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնտեսությունների 1305 հա անտառային տարածքներում իրականացվել են բնական վերաճի օժանդակման աշխատանքներ:

❖ 2019թ. նոյեմբերից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի Վանաձորի, Լավարի, Տաշիրի, Զիլիգայի և Ստեփանավանի անտառտնտեսություններում իրականացվում է 850 հեկտար դեգրադացված անտառների վերականգնում՝ հանքայնացման և սերմերի ցանքսի (600 հա) և կոճղաշիվային վերականգնման (200 հա) միջոցով: Աշխատանքները ընթացքի մեջ է:

❖ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավան, Տաշիր և Զիլիգա անտառտնտեսությունների համար ձեռք են բերվել դաշտային համակարգիչներ (TDC 100) և գլոբալ տեղորոշման համակարգեր (GPS), որոնք կարճատև ուսուցումից հետո կտրվեն անտառտնտեսության աշխատակիցներին՝ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

❖ Ընթացքի մեջ է «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի կայուն կառավարում և համայնքային կարողությունների զարգացում» ծրագիրը: Ծրագրի հայեցակարգում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության 3 մարզ, այդ թվում Լոռու մարզը՝ Մարգահովիտ և Ֆիզուլետովո բնակավայրերով: Լոռու մարզում իրականացվող ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 79 մլն. 752.6 հազ. դրամ:

❖ «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում Մարգահովիտ համայնքում իրականացվել է Մարգահովիտի համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ) կառուցապատման և վերանորոգման աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 6 մլն 928.9 հազ. դրամ, որից համայնքի համաֆինանսավորումը կազմել է 2 մլն. 356.2 հազ. դրամ:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

4.1 Կրթություն

- ❖ ՀՀ Լոռու մարզում գործում են 163 պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 68-ը՝ հիմնական, 80-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ավագ, 3 վարժարան:
- ❖ Լոռու մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը 2019թ. կազմել է շուրջ 9/1:
- ❖ Լոռու մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից 2018-2019 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցած աշակերտներից 39-ը արժանացել են մրցանակների /1-ին կարգի դիպլոմ՝ 4 աշակերտ, 2-րդ կարգի դիպլոմ՝ 8 աշակերտ, 3-րդ կարգի դիպլոմ՝ 13 աշակերտ, գովասանագիր՝ 14 աշակերտ, որոնք պարգևատրվել են ՀՀ Լոռու մարզպետի կողմից:
- ❖ 2019թ-ին ՀՀ Լոռու մարզից ՀՀ պետական ԲՈՒՀ-եր հայտագրվել է 906 դիմորդ, որից ընդունվել է 739 շրջանավարտ (նախորդ տարի 370):
- ❖ 2019թ. կրթության բնագավառում պլանավորվել և կատարվել են հետևյալ աշխատանքները.
- ❖ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ պարտադիր զինակոչի ենթակա թվով 40 պատանիներին տարկետում տրամադրելու մասին:
- ❖ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի կողմից 80 ժամյա վերապատրաստում են անցել 14 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչներ:
- ❖ Պետական բյուջեի ֆինանսավորմամբ նախորդ տարվա համեմատությամբ ՀՀ Լոռու մարզում նախակրթարանների թիվը ավելացել է 4-ով՝ Գուգարքի, Մարգահովտի, Ձորամուտի և Վանաձորի թիվ 30 դպրոցներում: Արդյունքում դպրոցահեն նախակրթարաններում ապահովվել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության աճ 120-ով: ՀՀ ԿԳՄՍ ԿԾԿ ԾԻԳ ՊՀ-ի կողմից իրականացվող «Նախադպրոցական կրթության բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում 2019թ. սեպտեմբերից Սպիտակի թիվ 2 դպրոցում գործում է դպրոցահեն նախակրթարան 30 սանով, որը ֆինանսավորվում է «Կրթության բարելավում» վարկային ծրագրով:
- ❖ Ի կատարումն ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 6-ի թիվ 712-Ա որոշման՝ կազմակերպվել է Լոռու մարզի գոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ ու սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների 390 երեխաներ իրենց հանգիստն են անցկացրել Հանքավանի «Լուսաբաց» և «Արագած» մանկական առողջարարական ճամբարներում:
- ❖ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 կետի գ) դրույթի կատարումն ապահովելու նպատակով (բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8-րդ դասարանների համար) բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցներում կազմակերպվել է 9325 տեսադաս: Հեռավար դասեր են կազմակերպվել մարզի դպրոցների միջև, որին մասնակցել են 48 դպրոցներ:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

- ❖ 2019թ.-ին ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքներ են կատարվել մարզային ենթակայության թվով 4 դպրոցում /Լեջան, Կարմիր Աղեգ, Դեբեդ, Վանաձոր թիվ 25 մասնակի/:
- ❖ 2019թ. ՀՀ Լոռու մարզին հատկացված միջոցների վերաբաշխման արդյունքում հիմնանորոգվել են Նեղոցի, Մեծ Այրումի , Վանաձորի թիվ 27 դպրոցի /ընթացքի մեջ է/, Դեբեդի դպրոցների տանիքները:
- ❖ Տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 7 դպրոցում /Վանաձորի թիվ 4, թիվ 8, Զրաշենի, Լոռի Բերդի, Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոցներում/:
- ❖ Սանհանգույցի մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 20 դպրոցում /Ազնվաձորի, Շահումյանի/հարմարեցված/, Վահագնիի, Լեռնանցքի, Ղուրսալի, Մեծ Պարնիի, Սարալանջի, Ստեփանավանի վարժարանի, Գարգառի, Գյուլագարակի, Լեջանի, Ալավերդու թիվ 11, Ախթալայի թիվ 1, Դսեղի, Շնողի, Աթանի, Այգեհատի, Զորամուտի, Սարատովկայի, Պետրովկայի դպրոցներ/:
- ❖ Մարզադահլիճի վերանորոգման աշխատանքներ են կատարվել թվով 3 դպրոցում /Վանաձորի թիվ 1, թիվ 8, Լեռնապատի դպրոցներ/:
- ❖ Թեքահարթակներ են կառուցվել թվով 6 դպրոցում /Լեռնանցքի, Գարգառի, Ալավերդու թիվ 7, Շնողի, Նեղոցի, Աթանի, Մեծավանի թիվ 2 դպրոցներում/:
- ❖ Պատուհանների փոխարինման աշխատանքներ են իրականացվել թվով 27 դպրոցում /Վանաձորի թիվ 4, թիվ 15, թիվ 25, թիվ 30, Ազնվաձորի, Վահագնիի, Ալավերդու թիվ 10, Ալավերդու թիվ 7, Զորագյուղի, Լեռնավանի, Ղուրսալիի, Գյուլագարակի, Ագարակի, ԿԱթնաղբյուրի, Հոբարձու, Արմանիսի, Յաղդանի, Արևածագի, Աքորու, Օձունի թիվ 2, Նեղոցի, Այգեհատի, Ծաղկաշատի, Շամուտի, Չկալովի, Սարատովկայի, Պետրովկայի դպրոցներում/
- ❖ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում նախատեսվող փոքր թվակազմով աշակերտներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման նպատակով ուսումնասիրվել և առաջարկվել է ծրագրում ներառել ՀՀ Լոռու մարզի Մղարթի, Հագվու, Մեղովկայի և Ուրասարի դպրոցները, Հագվու և Մեղովկայի դպրոցների համար 2019թ. իրականացվել են նախագծման աշխատանքներ, 2020-2021 թթ. համար առաջարկվել է ընդգրկել Մղարթի, Բլագոդարնոյեի, Զիլիգայի և Կաթնառատի դպրոցները:
- ❖ Շուրջ 30 աշակերտների համար կազմակերպվել է տնային ուսուցում:
- ❖ Կազմակերպվել է 2019թ. <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային փուլը: <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների հաղթողները պարգևատրվել են ՀՀ Լոռու մարզպետի կողմից:
- ❖ Կազմակերպվել և իրականացվել է Ստեփանավանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի, հասարակագիտության ուսուցիչների և դասվարների վերապատրաստման դասընթացներ «Ֆինանսական կրթությունը դպրոցում» թեմայով, որի արդյունքում վերապատրաստվել են տարածաշրջանի թվով 130 ուսուցիչներ:

- ❖ «Բիզնես և կրթություն-համագործակցություն» հիմնադրամը Գերմանիայի դաշնության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է «Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն հարավային Կովկասում» տարածաշրջանային ծրագիր: Կազմվել և «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամին են ներկայացվել ՀՀ Լոռու մարզի շուրջ 31 դպրոցների տվյալներ՝ որոնք ակտիվ մասնակցություն կունենան այդ ծրագրին:
- ❖ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության կողմից 2019թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին վերապատրաստվել են «Ձեռնարկատիրական կրթության առարկան և բաղադրիչները» թեմայով Լոռու մարզի դպրոցներում դասավանդող շուրջ 804 ուսուցիչներ:
- ❖ Ուսումնասիրվել և քննարկվել են դպրոցների հաստիքացուցակները, առաջարկվել է վերանայել հաստիքները (դրույքները)՝ հաշվի առնելով դրանց անհրաժեշտությունն ու ֆինանսական միջոցները, որի արդյունքում տնտեսվել են ֆինանսական միջոցներ, իսկ ֆինանսական միջոցների տնտեսման արդյունքում շուրջ 100 դպրոցներում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:
- ❖ ՀՀ կառավարության 2019թ.-ի հուլիս 4-ի թիվ 872-Ն որոշման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարարության հետ 2019թ.-ի օգոստոսի 21-ին կնքված պայմանագրի համաձայն Լոռու մարզի թվով 118 դպրոցում նախատեսվել է տեղադրել «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ /ընթացքի մեջ է/:
- ❖ ՀՀ Լոռու մարզում 2019թ-ին համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվն ավելացել է 3-ով (Գյուլագարակի, Գարգառի և Մեծ Պարնիի նախադպրոցական ուսումնական հաստատություններ, 143 երեխա՝ 5 խմբով):
- ❖ Հավաքագրվել և ամփոփվել է տեղեկատվություն՝ ՀՀ Լոռու մարզի սահմանամերձ և լեռնային համայնքներում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների մասին: Մարզային ենթակայության թվով 99 դպրոցում աշխատում է 621 երթևեկող ուսուցիչ, 21 դպրոցում՝ 208 աշակերտ: Այս 208 աշակերտների համար պետքյուջեից հատկացվել է 2992.0 հզ. դրամ:
- ❖ 2019թ. մարզի դպրոցներին բաշխվել է թվով 2361 հատ սովորական նմուշի և թվով 28 հատ գերազանցության վկայական, թվով 775 հատ ատեստատ, թվով 4500 հատ գովասանագիր:
- ❖ 2019-2020 ուստարվա համար դպրոցներին բաշխվել է 77 անուն թվով 116 766 դասագիրք:

4.2 Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶՌ-ի ոլորտային գերակա նպատակ:

Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- ❖ Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում:
- ❖ Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում:
- ❖ Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում:
- ❖ Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում:
- ❖ Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում:
- ❖ Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում:
- ❖ Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում:
- ❖ Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում:
- ❖ Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:
- ❖ ՀՀ տարածքում 2017թ. ներդրվել է էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգ (armed.am)՝ ազգաբնակչության բուժօգնության որակի և մատչելիության ապահովման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի վերացման նպատակով: Գործող էլեկտրոնային առողջապահության համակարգի շարունակական բարելավում ՀՀ Լոռու մարզի առողջապահական հաստատություններում:

2019թ. ՀՀ Լոռու մարզի առողջապահական ընկերություններում կադրավել են՝

- ❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարեսկզբին ունեցած շուրջ 150 մլն. դրամ պարտքը 01.11.2019թ. դրությամբ ամբողջությամբ մարվել է՝ նոր տնօրինության կողմից ճիշտ ղեկավարման և տնտեսավարման, ինչպես նաև դրամաշրջանառությունը «սպիտակ դրամարկղով» իրականացնելու շնորհիվ: Վերոնշյալ փաստը ապացուցում է, որ ավելացել են մատուցվող ծառայությունների ծավալները և որակը, մեծացել է ազգաբնակչության վստահությունը:
- ❖ 2018 թվականի հուլիսի 1-ից, այնուհետև 2019 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում բարձրացվել են առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձերը՝ գրեթե 30%-ով, իսկ հիվանդանոցային օղակի բուժաշխատողներինը դեռևս մնում են նույնը: Լոռու մարզի հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող առողջապահական ընկերությունների բուժաշխատողների աշխատավարձերը հնարավոր եղավ բարձրացնել ընկերություններում վճարովի ծառայությունների ավելացման շնորհիվ: Այսպես, եթե 2018թ. «Վանաձորի

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիտորինգ

բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բժշկի միջին աշխատավարձը կազմել է 267.0 հազ. դրամ, 2019թ. այն կազմում է շուրջ 455.0 հազ. դրամ:

Այլ աշխատանքներ՝

❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ սեփական միջոցներով ձեռք է բերել 5822.8 հազ. դրամի գույք և սարքավորում, ստացել նվիրատվություն բժշկական նշանակության պարագաներ, գույք և սարքավորումներ 9679.7 հազ. դրամ, ընդամենը 15502.5 հազ. դրամ:

❖ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ԷՍԳ-ի ապարատ 360, 0 հազ. դրամ արժեքով:

❖ «Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ սեփական միջոցներով վերակառուցել է լոկալ ջեռուցման համակարգը՝ 5874.6 հազ. դրամ արժեքով:

❖ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել իմունաֆերմենտային անալիզատոր, բժշկական և ոչ բժշկական սարքավորումներ՝ 2514.7 հազ. դրամ արժեքով:

❖ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Գուգարք» ԿՊ» ՓԲԸ-ին է տրամադրվել թվային ռենտգեն սարքավորում՝ 120488.9 հազ. դրամ արժեքով, սեփական միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ՝ 3373.0 հազ. դրամ արժեքով, ընդամենը 123.861.9 հազ. դրամ:

❖ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով կատարվել է վերանորոգման աշխատանքներ 14483.0 հազ. դրամ արժեքով: Սեփական միջոցներով ձեռք է բերել սարքավորումներ, պարագաներ և կատարել վերանորոգման աշխատանքներ 1615.2 հազ. դրամ արժեքով, ՀՀ ԱՆ կողմից ստացել է համակարգիչներ և ՄԱԿ-ի կողմից սառնարան՝ 1528.7 հազ. դրամ արժեքով, ընդամենը՝ 2223.7 հազ. դրամ արժողությամբ գույք և սարքավորում:

❖ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ՈՒՁՀ ապարատ՝ 8810.1 հազ. դրամ արժեքով, կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ 692.8 հազ. դրամ արժեքով, ընդամենը՝ 9502.9 հազ. դրամ:

❖ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել որովայնային լապարասկոպիայի սարքերի և գործիքների հավաքածու, բիոքիմիական անալիզատոր, հեմատոլոգիական անալիզատոր, տեսահսկման սարքավորումներ, համակարգչային հավաքածու, գրասենյակային պարագաներ և այլ բուժսարքավորումներ, կատարել է շինարարական աշխատանքներ ընդամենը՝ 32685.0 հազ. դրամ արժեքով: «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է Յազ լազերային համակարգ, ներառյալ սեղան և լրակազմ, ընդամենը՝ 5355.3 հազ. դրամ արժեքով:

❖ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով շինարարական աշխատանքներ, սարքավորումների նորոգումներ, ձեռք է բերել բժշկական սարքավորումներ, գույք, տեղադրել է տեսահսկման համակարգ ընդամենը 12973.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է շտապօգնության գծային մեքենա, հագեցված օժանդակ սարքավորումներով, 16 դյուրակիր համակարգիչ, սարքավորումներ և պարագաներ՝

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

ընդամենը 33530.0 հազ. դրամ արժեքով: Սեփական միջոցներով ձեռք են բերվել լաբորատոր սարքավորումներ, բժշկական գույք և պարագաներ 2289.0 հազ. դրամ արժեքով, ընդամենը 35819.0 հազ. դրամ:

❖ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել սարքավորումներ, բժշկական հագուստ, պարագաներ, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել հաճախումների կառավարման համակարգ ընդամենը 3452.0 հազ. դրամ արժեքով: ՀՀ ԱՆ-ի կողմից տրամադրվել են ավտոկլավ և համակարգչային հավաքածու ընդամենը՝ 3013.7 հազ. դրամ արժեքով: Ակբա-Լիզինգ վարկային գծով ձեռք են բերվել 26404.5 հազ. դրամ արժեքով գույք և սարքավորում, որից՝ ՈԻԱԶ ավտոմեքենա՝ 6100.0 հազ. դրամ արժեքով, լապարասկոպիկ վիրահատական սարք՝ 4350.0 հազ. դրամ արժեքով, արյունաբանական վերլուծիչ՝ 3200.0 հազ. դրամ արժեքով և 2018թ. տարեվերջին լիզինգով ձեռք բերված այլ սարքավորումներ՝ 15954.5 հազ. դրամ արժողությամբ: Այսպիսով, 2019թ. ընթացքում ձեռք է բերվել՝ ընդամենը 32870.2 հազ. դրամ արժեքով գույք և սարքավորում:

❖ «Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ» /«COAF»/-ի կողմից մի շարք ընկերություններում կատարվել են վերանորոգման աշխատանքներ «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 100.0 հազ. դրամ և Քարինջի ԲՄԿ-ում՝ 268.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի Հոբարձու ԲՄԿ-ն վերանորոգվել է ամերիկահայ բարերարի աջակցությամբ ընդամենը՝ 3279.1 հազ. դրամ արժեքով:

❖ «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ն ձեռք է բերել ԷՍԳ-ի ապարատ՝ 380.0 հազ. դրամ արժեքով:

❖ «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում բարերարների կողմից կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը՝ 670.0 հազ. դրամ, համայնքապետարանի կողմից տրվել է դրամաշնորհ 1890.0 հազ. դրամ, իրականացվել են 1903.0 հազ. դրամի գազաֆիկացման աշխատանքներ, ընդամենը 4463.0 հազ. դրամ:

❖ «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ին համայնքապետարանի կողմից տրամադրվել է 650.0 հազ. դրամ:

❖ «Ճոճկանի ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին համայնքապետարանի կողմից տրամադրվել է 169.0 հազ. դրամ ընթացիկ վերանորոգման համար:

❖ «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ին համայնքապետարանի կողմից տրամադրվել է 120.0 հազ. դրամ ընթացիկ վերանորոգման աշխատանքների համար:

❖ Այսպիսով, մարզի առողջապահական ընկերություններում ձեռք են բերվել գույք, սարքավորում, կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը 338097.0 հազ. դրամ արժեքով, որից սեփական միջոցներով՝ 107622.6 հազ. դրամ արժեքով, այլ միջոցներով՝ 193242.4 հազ. դրամ արժեքով, համայնքապետարանների կողմից՝ 4732.0 հազ. դրամի աշխատանքներ, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի կողմից՝ 32500.0 հազ. դրամ արժեքով:

4.3 Սոցիալական ապահովություն

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

❖ ՀՀ Լոռու մարզում 01.01.2020թ. դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստների իրավունք ունեն միջինը 13.806 ընտանիք, եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 758, 01.09.2019թ. դրությամբ կենսաթոշակառուների թիվը 50058, հաշմանդամների թիվը՝ 16.498 /որից՝ 678 մանկուց/: Դեռևս ՀՀ մարզերից ամենաշատ կենսաթոշակառուների եւ հաշմանդամների տվյալներ արձանագրվել են Լոռու մարզում:

❖ 2019թ. համար սոցիալական պաշտպանության բնագավառում բնակչության կենսաապահովման գծով նախատեսվել էր 5.95 մլրդ դրամի /այդ թվում նաև՝ ընտանեկան եւ սոց.նպաստների, հրատապ օգնության/ վճարումներ: 2019թ. ընթացքում վճարվել է ավելի քան 4.55 մլրդ դրամ: Տնտեսումը կազմել է շուրջ 1.4 մլրդ դրամ:

❖ 2019թ. ՄԶՌ-ի սոցիալական ապահովության ոլորտի ուղղություններով առաջարկված ծրագրերում ոլորտային նպատակ է դիտվում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը և որակի բարձրացումը: Ծրագրերի կենսագործմանը կուղղորդվեն Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավումը /առաջարկվել է՝ «Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագիրը/, Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը, Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովումը /առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը/, Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը /առաջարկվել են «Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 3 ծրագիրը/:

❖ Մարզի խոցելի բնակչության սոցիալական աջակցությունը ընդգրկել է այն աշխատանքները, որոնք ընթանում են երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում /մասնավորապես՝ «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն», «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց», Զբաղվածության պետական և այլ ծրագրեր/: Առանձնակի պետք է նշել այն ուղղորդված աշխատանք, որն իրականացվում է Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով, որոնցից կարելի է նշել՝ ՀՀ կառավարության 10.09.2015թ. N1035-Ն և 07.09.2017թ. N1151-Ն որոշումների հիման վրա պետական հավաստագրերի հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են աջակցող պարագաները (բացառությամբ՝ պրոթեզի և օրթեզի կոշիկների), լսողական սարքերն և հաշմանդամի սայլակները, «Հաշմանդամներին աջակցող պարագաներով, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգումը» ըստ որի՝ իրականացվում է հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց պրոթեզավորում, վերականգնողական պարագաներով ապահովում և դրանց վերանորոգում, այդ թվում՝ նաև աչքի պրոթեզավորում և ձայնաստեղծ սարքերի տրամադրումը:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

❖ Առանձնակի նշանակություն ունեն «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ» և «Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ» միջոցառումները, որոն շրջանակում հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամ չճանաչված անձանց մատուցվել է բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ «Արթմեդ» ԲՎԿ-ում: Իսկ «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերում» միջոցառման և մարզային գրադարանի կողմից տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի և տետրերի պատրաստման միջոցով հնարավորություն է ընձեռում տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալ իրենց համար մատչելի ձևաչափով:

❖ 2019թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվում են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

❖ Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը:

❖ 2019թ. սպասելիքները մեծ են, քանի որ պետական ծրագրային աշխատանքներում Լոռու մարզում Համալիր կենտրոնների ձևավորումը օրակարգային է. Վանաձորում և Տաշիրում գործում են համալիր կենտրոններ /Տաշիրում այն շահագործման է հանձնվել 2019թ./, իսկ մյուս տարածաշրջանային կենտրոններում՝ Ստեփանավանում՝ համալիր կենտրոնի կառուցումն ընթացքի մեջ է /շահագործման կհանձնվի 2020թ./, Ալավերդիում կիրականացվի տրամադրված տարածքի վերապրոֆիլավորում, իսկ Սպիտակում՝ առկա է նախնական պայմանավորվածություն առաջարկված տարածքի համար: Պետական քաղաքականության հիմքում դրված է որակյալ համալիր սոցիալական ծառայությունների մատուցումը, որի իրականացման համար շատ է կարևորվում նաև սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական, ոչ պետական/ համակարգչային տեխնիկայով հագեցվածությունը և համացանցային կապով ապահովումը, որն այսօր առկա է բոլոր կազմակերպություններում:

❖ Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավառում ներգրավված սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

❖ 2019թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը: 2019թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզում իրականացվեց Վարձատրվող հասարակական թվով 9

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

աշխատանքներ մարզի 8 համայնքներում /Գեղասարում՝ 2 /մեկը՝ լրացուցիչ հատկացումով/, Ձորագյուղ, Ազնվաձոր, Դարպաս, Սպիտակ, Ալավերդի, Գյուլագարակ, Լոռի Բերդ/:

❖ ՄԶՌ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Թեքահարթակների առկայությունն այսօր գրեթե բոլոր պետական և հասարակական նշանակության կազմակերպություններում իրողություն է, սակայն դրանք կարիք ունեն համակարգված գնահատման իրնպես որակական, այնպես էլ կիրառելության տեսանկյունից:

❖ 2019թ. նոր որակ է սպասվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման հարցում՝ ելնելով է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թիրախավորված տարեկան միջոցառումների ծրագրից: Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական սարքերի և պարագաների հավաստագրման եղանակը որակական բարձր մակարդակի վրա հասցրեց այդ բնագավառում իրականացվող աշխատանքները:

❖ Կարևոր նշանակություն ունի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերը: Փախստականների բնակարանային ապահովման գործում Միգրացիայի վարչությունը արդեն իսկ սկսել է շահառուների ցուցակների և նրանց ներկայության/բացակայության փոխադարձ ճշտումների գործընթացը:

❖ 2019թ. ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային ապահովման հարց լուծվել է թվով երեք զոհված զինծառայողների ընտանիքների համար /զոհված զինծառայողներ՝ Նաիրի Ամիրխանյան՝ Մարց, Ստեփան Առաքելյան և Ստեփանյան Գագիկ՝ Վանաձոր/: 2019թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել մեկ զոհված զինծառայողի ընտանիքի /Արսեն Առաքելյան՝ Վանաձոր/ բնակարանային հաշվառման գործը: Բնակապահովման հարցերը ընթացք կստանան աշխատանքները կանոնակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

6. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1 Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 926.7կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 443.5 կմ

Մարզում կան

- կամուրջ և կամրջային անցում 175 հատ
- ավտոմոբիլային թունել 5 հատ

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

❖ Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4 %-ը: Ներկայումս ընթացքի մեջ են Մ-6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի 2-րդ փուլով նախատեսված աշխատանքները (ավարտը նախատեսված է 2020թ վերջին): Ավարտական փուլում են գտնվում Մ-3 և Մ-7 միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները:

❖ 2019թ-ի տարեսկզբին ծրագրավորված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 13.29 մլրդ դրամ, որով նախատեսվում է հիմնանորոգել 102.05 կմ ճանապարհ, փաստացի կատարված է շուրջ 5.0 մլրդ դրամի աշխատանք:

Պետբյուջեի միջոցներով իրականացվել են 2.9մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ104+700- կմ116+900 հատվածի հիմնանորոգում,
- Մ- 7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ119+000-կմ127+000 հատվածի հիմնանորոգում,
- Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ)-Դիլիջան կմ13+500- կմ33+500 հատվածի հիմնանորոգում
- «Սոճուտ» դենդրոպարկ տանող ճանապարհի վերակառուցում
- Ստեփանավան քաղաքի Գ.Նժդեհի փողոցի հիմնանորոգում
- Տ-5-25, Մ-3-Լեռնապատ 4.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի ասֆալտապատում
- Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգում
- ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ գյուղին կից մայրուղուց Աշոտ Երկաթ պատմամշակութային ամրոց տանող ճանապարհի ասֆալտապատում
- Լուսաղբյուրի համայնքի ներհամայնքային ճանապարհի նորոգում
- Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում:
- Պետական վարկային միջոցներով՝
- Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ՝ 1 254.5 մլն դրամ
- Մ7-Մեծ Պարնի-Ծաղկաբեր կմ 0+000 - կմ 6+240 ճանապարհային հատվածի վերանորոգում՝ 653.0 մլն դրամ

❖ Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի հինգ փոքր համայնքներից կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ծառայության ավտոմեքենաներով:

❖ Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

5.2 Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Մարզի համայնքների շուրջ 65-70%-ում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

ՄԶՌ-ի ոլորտի հիմնախնդիր է հանդիսանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը: Ջրամատակարարման խնդիր ունի մարզի բնակչության 2.1%-ը, իսկ ջրահեռացման խնդիր ունեցող՝ բազմաբնակարան շենքերում ապրող բնակիչները կազմում են մարզի բնակչության 3.0%-ը:

Խմելու ջրամատակարարման բնագավառում 2019թվականին տարեկան աշխատանքային պլանով նախատեսված 4.555.246,0 –ից իրականացվել են 630.965,3 ՀՀ դրամի աշխատանքներ:

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ ծրագրի շրջանակներում 2019թվականին նախատեսված 43.9մլն դրամի աշխատանքների փոխարեն իրականացվել են 96.0մլն դրամի աշխատանքներ.
- Վանաձորի Տավրոս թաղամասի առանձնատների բաժանորդների ջրաչափական հանգույցի տեղափոխում սահմանազատման կետ, ջրաչափական դիտահորերի կառուցումով
- ք. Տաշիր, ՕԿՋ-ի տարածքում քլորակայանի և պահակատան վերանորոգում
- Դեբեդի կիրճում (Աքորի գյուղի ստորին կամ Դեբեդ գետի ձախափնյա հատված) Սարահարթ թաղամասի ՕԿՋ գնացող D=250-300մմ ջրատարի փոխարինում
- ք.Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան, Դարպաս, Լեռնապատ համայնքներում - պիլոտային ծրագրով իրականացվող ջրաչափերի և ջրաչափական հորերի տեղադրման աշխատանքներ.
- Գյուլագարակ համայնքում պոլիէթիլենային խողովակների և ձևավոր մասերի մատակարարման և տեղադրման աշխատանքներ
- ք.Վանաձոր, Չուխաջյան թաղամաս-պոլիէթիլենային խողովակների և ձևավոր մասերի մատակարարման և տեղադրման աշխատանքներ
- ք.Ստեփանավան, Միլիոնի փ. - դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ
- ք.Ստեփանավան, Ս.Նովա-Չայկովսկի փփ խաչմերուկ-դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ
- ք.Սպիտակ, Ոփյան փողոց-դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ
- ք.Սպիտակ, Շահումյան և Խնկոյան փող. խաչմերուկ-դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

- գ.Շիրականուտ-Դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ,
- Սուբվենցիոն ծրագրով մարզի 5 համայնքում իրականացվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ, ինչի արդյունքում կառուցվել և մասնակի վերանորոգվել է 15.6կմ ջրագիծ, կառուցվել է 4 կապտած, 1 մաքրման կայան:
- Պետական բյուջեի միջոցներով հրատապ ծրագրով 9 համայնքում իրականացվել են խմելու ջրագծերի կառուցման, վերանորոգման, կապտածների և ՕԿՁ-ի կառուցման աշխատանքներ:
- Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում 2019թվականին Լոռու մարզի 52 համայնքների կողմից նախատեսվել է իրականացնել 52.665.1 ՀՀ դրամի և մինչև տարեվերջ իրականացվել են 358.291,0 ՀՀ դրամի աշխատանքներ:

5.3 ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

❖ ՀՀ Լոռու մարզի էլեկտրաէներգիայի մատակարարը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ «Հյուսիսային» մասնաճյուղն է, որը հանդիսանում է միջանկյալ օղակ արտադրող կայանների և բաշխիչ ցանցերի միջև ՀՀ հյուսիսային տարածքում: «Հյուսիսային» մասնաճյուղը հանդիսանում է նաև կարևոր օղակ, որի միջոցով կատարվում է էլեկտրաէներգիայի փոխանցումը Վրաստանի Հանրապետություն:

❖ 2019թ-ին մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 3,171,857.8 հազ դրամ ընդհանուր արժեքով: Առավել խոշոր ծրագրերն են.

❖ 2019թ-ի ընթացքում «Հյուսիսային» մասնաճյուղի կողմից իրականացվել են «Վանաձոր-1» ենթակայանի ԲԼՕԳ-ի ծառայության արտաքին պատերի հարդարում՝ 1.2 մլն դրամ, քաղաքացիական պաշտպանության ապաստարանի տանիքի նորոգում՝ 2.5 մլն դրամ և կենտրոնական պահեստի հիմնապատի նորոգում ու պատերի փոխարինում ցինկապատ թիթեղով՝ 4 մլն դրամ:

❖ 2019թ-ին վարկային միջոցներով իրականացվել են «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցում՝ 74.4 մլն դրամ և «Լավվար-Նոյեմբերյան» 110կՎ ՕԳ կառուցում՝ 1,533.91 մլն դրամ:

❖ ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2020թ. դրությամբ առկա է շուրջ 97 117 բաժանորդ:

❖ 2019թ-ի ընթացքում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից մարզում իրացվել է 183.1 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա, որից 115.0 մլն. կՎտժ-ը բնակչությանը, ինչի համար անհրաժեշտ էր գանձել 7.457 մլդ դրամ, փաստացի գանձվել է 7.432 մլդ դրամ, (99.7%):

«ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ 1,026.0 մլն դրամի ներդրում.

- Նոր բաժանորդների միացման աշխատանքներ
- Տրանսֆորմատորային ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ
- Օդային և մալուխային նորոգման և այլ աշխատանքներ

- Թվով 20 համայնքապետարանների ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ՝ 43.3 մլն դրամի:
- ❖ ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի 22 բնակավայրերում իրականացվել է փողոցային լուսավորության համակարգերի կառուցում, այդ թվում՝ նշված համայնքներից 3-ում տեղադրվել է արևային ֆոտովոլտային կայան:
- ❖ 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանով էներգամատակարարման բնագավառում նախատեսվել էր 3,058,724.50 հազ դրամ: Առ 01.01.2020թ. դրությամբ իրականացվել է 3,171,857.8 հազ դրամի աշխատանքներ, որից ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝

- **Սեփական միջոցներ- 77,202.8 հազ դրամ**
- **Վարկային միջոցներ- 2,265,390.6 հազ դրամ:**
- **Միջազգային կազմակերպություններ և դոնորներ.**
- **Համայնքային բյուջե - 211,244.8 հազ դրամ**
- **Մասնավոր ներդրողներ - 618,019.6 հազ դրամ:**

ԿԱՊ

- ❖ ՀՀ Լոռու մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ները: «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:
- ❖ «ՎԵՈՆ Արմենիա» ընկերության կողմից 2019 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականացվել են.
- Վանաձոր, Ստեփանավան, և Ալավերդի համայնքներում իրականացվել են օպտիկամանրաթելային մալուխի անցկացման աշխատանքներ:
- Վանաձոր համայնքի Դիմաց և Տարոն-4 թաղամասերում իրականացվել են RDLU սարքավորումների տեղադրում՝ թվայնացվել են ԱՀԿ-5 և ԱՀԿ-6 համակարգերը:

Աղբահանություն

- ❖ Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ եղանակով, չկան պահանջվող նորմերին համապատասխանող աղբավայրեր, չկան նաեւ աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի):
- ❖ Աղբահանության գործընթացը վերահսկելու եւ պատշաճ մակարդակի հասցնելու նպատակով նախատեսում ենք պարբերական այցեր համայնքներ՝ համայնքների

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

ղեկավարների հետ քննարկումներ աղբահանության առավել արդյունավետ տարբերակներ գտնելու համար:

- ❖ ՀՀ Լոռու մարզում գույքագրված է 348 աղբավայր, որից 342-ը փակված է:
- ❖ 2019 թվականին նախատեսվել և իրականացվել է 1 գործող աղբավայրի փակման աշխատանքներ («Թումանյան-2» աղբավայր):

5.4 Գազամատակարարում

- ❖ Լոռու մարզի 56 համայնքները՝ 7 քաղաքային եւ 49 գյուղական, բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: Առ 01.01.2020թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 50 (89.3%) եւ չգազաֆիկացված 6(10.7%) համայնք: Գազաֆիկացված չէ նաև 27 բնակավայր:
- ❖ Առ 01.01.2019թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազֆիկացված բնակավայրերում առկա են թվով 66314 բաժանորդներ, 30923 բնակարաններ և 35391 առանձնատներ, որից թվով 31344 Վանաձոր քաղաքում: 2019թ. ընթացքում բաժանորդների թվաքանակը աճել է 571-ով, որից 308 բնակարաններ և 263 առանձնատներ:
- ❖ 2019 թվականին մարզում իրականացվել են 256,807.5 հազ. դրամ ընդհանուր արժեքով գազամատակարարման աշխատանքներ:

Առավել խոշոր ծրագրերն են.

2019թ-ին իրականացված աշխատանքներ.

- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում միջին և ցածր ճնշման վերգետնյա և ստորգետնյա գազատարերի վերատեղադրում և վթարային հատվածների կապիտալ նորոգում.
- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում ՊԳԿԿ-ների (պահարանային գազակազավորիչ կետեր) կապիտալ նորոգում
- Բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների և ազդանշանային սարքերի տեղադրում.
- ❖ ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում գազաֆիկացվել են Ախթալա/2 թաղամաս/, Շամլուղ և Նեղոց բնակավայրերը:
- ❖ 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանով գազամատակարարման բնագավառում նախատեսվել էր 334,284.1 հազ դրամ: Առ 01.01.2020թ. դրությամբ իրականացվել է 256,807.5 հազ դրամի աշխատանքներ, որից ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝

- Սեփական միջոցներ- 39,614.4 հազ դրամ.
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ.
- Համայնքային բյուջե - 29,112.6 հազ դրամ.
- Մասնավոր ներդրողներ - 188,080.5 հազ դրամ.

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

6.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

❖ Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման և վերանորոգման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշման նպատակով հետազննումների անցկացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

❖ Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակապահովման հարցը:

❖ 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացումը և վերանորոգումը, էներգոխնայողության համակարգերի տեղադրումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի եւ շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են:

❖ Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում ծրագրով 2018թ. հատկացվել էր 460.0 մլն. դրամ, աշխատանքները իրականացվել և ավարտվել են 2019 թվականին: Կատարված աշխատանքների արդյունքում ավարտական տեսքի է բերվել նախկինում կիսակառույց մնացած 44 առանձնատներ: Ֆինանսական միջոցների տնտեսումը նշված ծրագրով կազմում է մոտ 110.8 մլն. դրամ, որով նախատեսվում է ավարտական տեսքի բերել լրացուցիչ ևս 7 անավարտության տարբեր աստիճան ունեցող կիսակառույց առանձնատներ: 2019թ.-ին նշված ծրագրով հատկացվել է ևս 452.3 մլն. դրամ և 677.9 մլն. դրամ, աշխատանքները ընթացքի մեջ են և կավարտվեն 2020թ.-ին:

7. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7.1 Տարածքային կառավարում

ՀՀ պետական բյուջեից մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ներին հատկացված գումարների վերաբերյալ

/2018-2019թթ./

	2018թ. փաստացի	2019թ. փաստացի	2019թ.-ին 2018թ.-ի նկատմամբ հազ. դրամ/	2019թ.-ին 2018թ.-ի նկատմամբ /%- ով/
ՀՀ Լոռու մարզպետարանի պահպանման ծախսեր	571906.6	638504.7	66598.1	111.6
Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հատկացված գումար, որից՝	6788387.1	7074240.2	285853.1	104.2
ա/ Կրթական ոլորտի	6773285.8	7056118.6	282832.8	104.2
բ/ Մշակութային ոլորտի	15101.3	18121.6	3020.3	120.0

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը 2019 թվականին փաստացի կազմել է 638504.7 հազ. դրամ, կամ 2018թ. նկատմամբ ծախսերը ավելացել են 66598.1 հազ. դրամով /աճը 11.6%/, որը հիմնականում պայմանավորված է «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և «Վարչական սարքավորումներ» հոդվածներով գումարների նախատեսմամբ: Վերը նշված հոդվածներով նախատեսվել է համապատասխանաբար 93190.5 հազ. դրամ և 3000.0 հազ. դրամ:

«Վարչական սարքավորումներ» հոդվածով նախատեսված գումարներով ձեռք են բերվել համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք:

Կրթության ոլորտում 2019թ. ֆինանսավորումը կազմել է 7056118.6 հազ. դրամ, կամ աճը 2018թ. նկատմամբ կազմել է 282832.8 հազ. դրամ /աճը 4.2%: Սեպտեմբերի 1-ից 10 տոկոսով բարձրացել է մանկավարժների աշխատավարձերը, որի արդյունքում բարձրացել է թվով 3623 մանկավարժների աշխատավարձեր:

Մշակութային ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպության /Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան/ պահպանման ծախսերը 2019թ.-ին փաստացի կազմել է 18121.6 հազ. դրամ, կամ աճը կազմել է 20.0 %:

ՀՀ պետական բյուջեից 2019թ. մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ներին նախատեսված և փաստացի ծախսված վերաբերյալ.

/հազ. դրամ/

	2019թ. նախատեսված	2019թ. փաստացի	2019թ.-ի 1-ին նախատեսվածի և փաստացի տարբերություն /տնտեսում/	2019թ.-ի փաստացի նախատեսվածի նկատմամբ /տոկոս/
ՀՀ Լոռու մարզպետարանի պահպանման ծախսեր	670430.1	638504.7	31925.4	95.2
Պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված գումար, որից՝	7078901. 2	7074240.2	4661.0	99.9
ա/կրթության ոլորտ	7060779. 6	7056118.6	4661.0	99.9
բ/մշակույթի ոլորտ	18121.6	18121.6		100

Ծախսերի արդյունավետ իրականացման և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման արդյունքում 2019 թվականին մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի գծով առաջացել է 31925.4 հազ. դրամ տնտեսում, այդ թվում՝ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով՝ 25167.0 հազ. դրամ, էներգետիկ ծառայություններ հոդվածով՝ 3065.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր հոդվածով՝ 1343.3 հազ. դրամ և այլն: Կրթության ոլորտում տնտեսումը կազմել է 4661.0 հազ. դրամ:

7.2. Տեղական ինքնակառավարում

2018թ. ՀՀ Լոռու մարզի համայնքներում 1 շնչին ընկնող սեփական եկամուտները (221.1 հազ. մարդ) փաստացի կազմել է 10.4հազ. դրամ, 10.5հազ. դրամ դրամ պլանավորվածի դիմաց, 2019թ. համար նախատեսվել է 11.4 հազ. դրամ (217.8 հազ. մարդ) կամ մարզում բնակչության 1 շնչի հաշվով սեփական եկամուտները 2018թ.ի նկատմամբ պլանավորվել է ավելացնել 9.6%-ով, տարեկան արդյունքներով այն կազմել է 11.7 հազ. դրամ:

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ

Լոռու մարզի համայնքների եկամուտները 2018թ. համար տարեսկզբին նախատեսվել էր 6,888,079.8 հազ. դրամ (տարեվերջին՝ 7,219,300.1 հազ. դրամ), փաստացի կատարումը կազմել է 7,172,292.2 հազ. դրամ, իսկ 2019թ. համար տարեսկզբին նախատեսվել է 7,283,137.7 հազ. դրամ (տարեվերջին՝ 8,640,320.7 հազ. դրամ), փաստացի կատարումը կազմել է 8,301,597.5 հազ. դրամ, 2019թ. պլանի աճը 2018թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 5.7%, իսկ 2019թ. փաստացիի աճը 2018թ. փաստացիի նկատմամբ կազմել է 15.7% աճ և ընդամենը եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը 2019թ. համար նախատեսվել է 31.9%, տարեկան կտրվածքով այն կազմել է 30.4%:

8. Ֆինանսավորում

Լոռու մարզի 2019թ-ին պլանավորված եւ իրականացված ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն

Հազ.դրամ

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2019թ.	60,087,655.3	43,309,710.2
	<i>որից՝</i>		
1	ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝	39,460,657.7	33,301,376.3
	<i>սեփական միջոցներ</i>	27,083,105.2	27,741,005.3
	<i>վարկային միջոցներ</i>	12,377,552.5	5,560,370.9
2	Միջազգային կազմակերպություններ և դոնորներ	4,683,952.6	801,549.1
3	Համայնքային բյուջե	1,183,312.4	1,243,949.1
4	Մասնավոր ներդրողներ	13,959,732.5	7,806,514.1
5	Այլ աղբյուրներ	800,000.0	156,321.7

ՀՀ Լոռու մարզի 2019 թվականի գործունեության ծրագիր մոնիթորինգ